

Հավելված  
ՀՀ Վայոց ծորի մարզի  
Եղեգնաձոր համայնքի ավագանու  
2025 թվականի մարտի 19-ի թիվ 36-Լ որոշման

Հավելված  
ՀՀ Վայոց ծորի մարզի  
Եղեգնաձոր համայնքի ավագանու  
2024 թվականի մայիսի 17-ի թիվ 44-Լ որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ**



2024թ.  
ԵՂԵԳՆԱՁՈՐ

## Բովանդակություն

|                                                                                                         |     |
|---------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Գլուխ 1. Առկա իրավիճակի գնահատում .....                                                                 | 4   |
| 1. Ներածություն .....                                                                                   | 4   |
| 2. Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական .....                                                  | 6   |
| 3. Պլանավորման տարածքի բնութագիր .....                                                                  | 8   |
| 4. Թափոնների քանակ և բաղադրություն .....                                                                | 10  |
| 5. Թափոնների գործածությունը .....                                                                       | 11  |
| 6. Իրազեկվածության աստիճան .....                                                                        | 19  |
| 7. Ֆինանսավորում և բյուջե .....                                                                         | 221 |
| 8. Մշտադիտարկում և գնահատում .....                                                                      | 24  |
| Գլուխ 2. Պլանավորում .....                                                                              | 266 |
| 1. Կանխատեսումներ և կանխադրույթներ պլանավորման ժամանակաշրջանում...266                                   |     |
| 2. Նպատակների և թիրախների սահմանում (Կարճաժամկետ և միջնաժամկետ)...277                                   |     |
| 3. Գործողությունների պլան (Կարճաժամկետ և միջնաժամկետ) .....                                             | 32  |
| 4. Երկարաժամկետ զարգացում .....                                                                         | 33  |
| 5. Ֆինանսավորում և բյուջե .....                                                                         | 34  |
| 6. Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման բյուջետավորում .....                                       | 36  |
| Գլուխ 3. Մշտադիտարկում և վերլուծություն .....                                                           | 39  |
| 1. Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված նպատակների և թիրախների իրագործումը .....                         | 39  |
| 2. Թերի իրագործված նպատակների վերլուծություն .....                                                      | 41  |
| 3. Աղբահանության և կոշտ թափոնների ընթացիկ պլանում փոփոխությունների անհրաժեշտության վերլուծություն ..... | 41  |

|                                                    |                                                                                                                                                                                                                                                                            |
|----------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Պլանի անվանումը                                    | ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլան                                                                                                                                                                         |
| Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր     | Եղեգնաձոր համայնք՝ Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրեր                                                                                                                                                                                                |
| Պլանավորման ժամանակաշրջան                          | 2024-2028 թթ.                                                                                                                                                                                                                                                              |
| Ներկայացվող պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը  | 2026թ. մարտ, 2027 թ. մարտ                                                                                                                                                                                                                                                  |
| Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն        | «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արթուր Հայրապետյան, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարինե Հովհաննիսյան, առաջին կարգի մասնագետ Ռուզաննա Եղոյան                                                                                       |
| Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոս            | <a href="mailto:a.hayrapetyan86@mail.ru">a.hayrapetyan86@mail.ru</a> 094949894,<br><a href="mailto:marine1hovhannisyan@gmail.com">marine1hovhannisyan@gmail.com</a> 093931428,<br><a href="mailto:ruzanna.yeghoyan1997@mail.ru">ruzanna.yeghoyan1997@mail.ru</a> 098971009 |
| Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե | <a href="https://www.yeghegnadzor.am/Pages/Misc/Legislation/default.aspx">https://www.yeghegnadzor.am/Pages/Misc/Legislation/default.aspx</a>                                                                                                                              |

Պլանի օրենսդրական հիմքեր և ռազմավարական գերակայություններ

<https://www.mtad.am/departments/waste-management-programs>

# Գլուխ 1. Առկա իրավիճակի գնահատում

## 1) Ներածություն

1. Սույն պլանով (այսուհետ՝ Պլան) կանոնակարգվում են ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի (Եղեգնաձոր, Գլաձոր, Վերնաշեն, Մալիշկա և Գետափ բնակավայրեր, այսուհետ՝ Համայնք) վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ Համայնքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորումը, կառավարումը (իրականացումը) և մշտադիտարկման անցակցումը:

2. Պլանը կազմման համար հիմք են հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի N 07-Լ հրամանով հաստատված՝ աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանների կազմման մեթոդական ուղեցույցը:

3. Համայնքի տարածքում աղբահանությունն ու սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներ են, որոնք համայնքի ավագանու որոշմամբ, իր ուժերով ու տեխնիկական միջոցներով իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված օպերատորի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

4. Պլանում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **աղբ**՝ կոշտ կենցաղային թափոններ, ներառյալ՝ թափոնները, որոնք գոյանում են համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման հետևանքով.

2) **աղբահանություն**՝ գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում և տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման նպատակով.

3) **կենսաքայքայվող (օրգանական) աղբ**՝ աերոբիկ կամ անաերոբիկ քայքայման ենթարկվող թափոն (օրինակ՝ սննդային թափոն, այգիներում ծառերի էտման, բույսերի ու թփերի սանիտարական մաքրման հետևանքով առաջացող աղբ և այլն).

4) **շինարարական աղբ**՝ շենք-շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաև տարածքների բարեկարգման գործունեության հետևանքով առաջացող աղբ.

5) **խոշոր եզրաչափերի աղբ**՝ մարդու կենսագործունեության հետևանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող աղբ, որի չափերը գերազանցում են մեկ խորանարդ մետրը և, ֆիզիկական հատկություններից ելնելով (չափ, ծավալ կամ քաշ), անհնար է դրա հավաքումը, պահումը կամ փոխադրումը աղբի համար նախատեսված տեխնիկական միջոցներով:

6) **աղբաման**՝ աղբի կուտակման համար նախատեսված տարողություն, որի ձևն ու չափը սահմանում է համապատասխան համայնքի ավագանին:

7) **աղբամուղ**՝ բազմաբնակարան շենքերում ներկառուցված՝ աղբի հավաքման, ուղղահայաց տեղափոխման և ժամանակավոր պահման համար նախատեսված ինժեներական սարքավորումների համալիր:

8) **աղբահավաք խուց**՝ բազմաբնակարան կամ հասարակական շենքերում աղբի ժամանակավոր պահման համար նախատեսված տարածք:

9) **աղբամանների հարթակ**՝ 0.75 խորանարդ մետր և ավել տարողությամբ աղբամանների տեղակայման համար նախատեսված տարածք, որոնց տեղադիրքը սահմանվում է սանիտարական նորմերին ու յուրաքանչյուր համայնքի աղբահանության սխեմաներին համապատասխան:

10) **փոխաբեռնման կայան**՝ բնապահպանական և տնտեսական արդյունավետությունից ելնելով՝ աղբի ժամանակավոր պահման, սեղմման և հնարավոր տեսակավորման համար նախատեսված կայան:

11) **աղբի հավաքման կենտրոն**՝ հատուկ հատկացված տարածք, որտեղ հավաքվում է տեսակավորված աղբը հետագա օգտահանման, վերաօգտագործման, վերամշակման և վնասագերծման նպատակով:

12) **աղբավայր**՝ բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան հատուկ ինժեներական կառույցների համակարգ՝ նախատեսված աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման և չեզոքացման համար:

13) **սանիտարական մաքրում**՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, զբոսայգիների, պուրակների, հրապարակների, խաղահրապարակների, բակերի, մայթերի, վերգետնյա և ստորգետնյա անցումների, կամուրջների, սիգամարգերի, լողափերի, շատրվանների, ճամփեզրերի, կողնակների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտներից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-վազումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների և աղբամանների հարթակների սպասարկումը:

14) **օպերատոր**՝ համայնքին կամ համայնքներին կամ դրանց վարչական տարածքում կամ տարածքի մի մասում աղբահանության և (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

15) **աղբի քանակի նվազեցում**՝ աղբի գոյացման վայրում՝ սկզբնաղբյուրում, գոյացող աղբի քանակի նվազեցման նպատակով համալիր միջոցառումների կիրառում:

16) **աղբի տեսակավորում**՝ վերաօգտագործման, օգտահանման և վերամշակման ենթակա աղբի տեսակների տարանջատումն ու առանձին հավաքումը աղբի գոյացման վայրում՝ սկզբնաղբյուրում, կամ աղբի տեսակավորման կայաններում.

17) **աղբի օգտահանում**՝ աղբի օգտակար օգտագործում այլ ապրանքի (արտադրանքի) արտադրության համար, ներառյալ՝ վերաօգտագործումը, երկրորդային ռեսուրսների ստացումը և աղբից օգտակար բաղադրիչների առանձնացումը.

18) **աղբի վերաօգտագործում**՝ աղբի օգտագործում սկզբնապես նախատեսված կամ այլ նպատակով, առանց էներգիայի վերականգնման.

19) **աղբի վերամշակում**՝ տեխնոլոգիական գործընթացների արդյունքով աղբի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունների փոփոխություն.

20) **աղբի փոխադրում**՝ աղբի հավաքում և տեղափոխում դրանց կուտակման վայրից դեպի վերաօգտագործման, վերամշակման, օգտահանման, վնասազերծման վայրեր և (կամ) աղբավայր.

21) **աղբի սեփականատեր**՝ աղբ գոյացնող ֆիզիկական, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որի տիրապետման, օգտագործման ու տնօրինման ներքո է աղբը:

5. Պլանում մեծ մաս են կազմում աղյուսակների տեսքով ներկայացված տվյալները, իսկ որոշ աղյուսակներում պլանավորման համար անհրաժեշտ տվյալները բացակայում են. մասնավորապես՝ թափոնների տարբեր գործածության ձևերի հետ կապված տվյալները, ինչը կրում է ժամանակավոր բնույթ: Բացակայող տվյալների հավաքագրման մասով պլանավորման մեջ ներառվել են համապատասխան մեխանիզմներ:

## 2) Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական

6. Համայնքում աղբահանության հիմնախնդիրներն են՝

1) թափոնների տեսակավորումը, օգտահանումը,

2) թափոնների վերաօգտագործման, վերամշակման կենտրոնների բացակայությունը,

3) աղբահանության ընթացքում վերահսկողություն իրականացնելու համար (մասնավորապես՝ չսահմանված վայրերում աղբաթափման դեպքեր) համապատասխան ռեսուրսների սակավություն, մշտադիտարկման բացակայություն,

4) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության և հանրային իրազեկվածության ցածր մակարդակ:

7. Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի՝

1) հիմնական սկզբունքներն են՝

ա. մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը,

բ. բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը,

գ. տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից,

դ. առաջացող աղբի քանակի նվազեցումը,

ե. աղբի տեսակավորման, վերաօգտագործման, վերամշակման և օգտահանման գործողությունների կիրառումը և աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալների նվազեցումը,

զ. շրջանաձև տնտեսության խթանումը,

է. աղբահանության ծառայության վճարովի լինելը.

2) նպատակները՝

ա. աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացումը,

բ. աղբի տեսակավորված համակարգի ներդրումը,

գ. Համայնքի ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման և անվտանգ հեռացման կամ օգտահանման ու վերամշակման ապահովումը,

դ. առաջացող աղբի առավելագույն օգտահանումը,

ե. սակավաթափոն և անթափոն միջոցառումների և տեխնոլոգիաների կիրառումը,

զ. աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը,

է. ոլորտում միջհամայնքային համագործակցությունը,

ը. համայնքային բյուջեի հաշվին կամ հանրային-մասնավոր համագործակցության շրջանակներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:

8. Ստորև ներկայացված է Համայնքի ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը.

| Ուժեղ կողմեր                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | Թույլ կողմեր                                                                                                                                                                                                                                                                                                          |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <ul style="list-style-type: none"> <li>Աշխարհագրական դիրք</li> <li>Համապատասխան աղբահավաք տեխնիկայի և աղբամանների առկայություն</li> <li>Աղբավայրի հասանելիություն բոլոր բնակավայրերի համար</li> <li>Համագործակցություն մասնավոր կազմակերպությունների, մարզի և ՀՀ այլ համայնքների հետ</li> <li>Նոր տեխնիկաների ձեռքբերում՝ տարբեր դրամաշնորհային ծրագրերի արդյունքում</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսական միջոցների սակավություն</li> <li>Աղբավայրի բարեկազման համար անհրաժեշտ տեխնիկայի բացակայություն</li> <li>Վերամշակող, վերաօգտագործող կազմակերպությունների բացակայություն</li> <li>Թափոնների կառավարման վերաբերյալ բնակչության իրազեկվածության ցածր մակարդակ</li> </ul> |


### 3) Պլանավորման տարածքի բնութագիր

9. Աղյուսակ 2-ում նկարագրված է պլանավորման տարածքը.

Աղյուսակ 2

|                                 | Ընդհանուր տարածք | Քաղաքային | Գյուղական | Արդյունաբերական | Գյուղատնտեսական | Կանաչ, անտառային |
|---------------------------------|------------------|-----------|-----------|-----------------|-----------------|------------------|
| Տարածքը (հա)                    | 24388.7          | 2690.79   | 21697.91  | 209.84          | 22044.51        | 469.88           |
| Տարածքը տոկոսով ընդհանուրից (%) | 5.2              | 16.5      | 3.7       | 2               | 0               | 0                |

10. Ստորև ներկայացված է Համայնքի աշխարհագրական սահմանները.



11. Աղյուսակ 3-ում ներկայացված է Համայնքի ժողովրդագրական տեղեկատվությունը.

Աղյուսակ 3

| Գրանցված բնակչություն (մարդ) | Փաստացի բնակվող (մարդ) | Տնտեսությունների թիվ | Բազմաբնակարան շենքերի թիվ | Բնակարանների թիվ |
|------------------------------|------------------------|----------------------|---------------------------|------------------|
|------------------------------|------------------------|----------------------|---------------------------|------------------|

|       |       |      |    |      |
|-------|-------|------|----|------|
| 20928 | 20323 | 5980 | 43 | 3705 |
|-------|-------|------|----|------|

12. Աղյուսակ 4-ում նեկայացված է Համայնքում կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը.

Աղյուսակ 4

| Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները                                                                          | քանակ | Նշումներ |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|----------|
| <b>Բնակելի նպատակային նշանակության շինություններ</b>                                                                   | 3748  |          |
| Բազմաբնակարան բնակելի շենքեր                                                                                           | 43    |          |
| Անհատական բնակելի տներ                                                                                                 | 3705  |          |
| <b>Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ</b>                                                                | 329   |          |
| Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ                                           | 247   |          |
| Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ | 27    |          |
| Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ                         | 20    |          |
| Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ                                               | 7     |          |
| Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ                                                    | 22    |          |
| Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն                                 | 6     |          |

#### 4) Թափոնների քանակ և բաղադրություն

13. Աղբահանության պլանավորման շրջանակներում հատկապես գոյացող թափոնների քանակի ծրագրեր և միջոցառումներ նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման մշակելիս ու նախատեսելիս՝ առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության որոշումը.

1) Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են՝

ա. մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (տոննա/տարեկան)

բ. մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի)

գ. մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/օր)։

2) Բաղադրությունն ընդունված է ներկայացնել տոկոսով՝ ըստ յուրաքանչյուր բաժնեմասի ընդհանուր զանգվածի չափաբաժնի։

14. Պլանի մշակման և իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է հավաքագրվող որը պետք է լինի հստակ, ճշգրիտ, պարբերական, տվյալները պետք է հավաքագրվեն համայնքի/բնակավայրի տարբեր հատվածներից, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողներից, տարվա տարբեր եղանակներին՝ մեկ շնչի հաշվով առաջացող աղբի կշիռը, բաղադրությունը, դրանց հնարավոր փոփոխությունները՝ ըստ սեզոնի և ժամանակահատվածի։

15. Տեղեկատվության հավաքագրումը և ճշգրիտ գնահատումը հնարավոր է հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ նմուշառման և դրա արդյունքների վերլուծության պարագայում։ Ընդ որում, նմուշառման պարբերականությունը թափոնների կառավարման համակարգի ներդրման սկզբնական փուլում պետք է լինի տարվա բոլոր սեզոններին՝ թափոնների գոյացման ինտենսիվության գործոններից կախված, իսկ հետագա տարիներին կարելի է նմուշառում իրականացնել որոշակի գործոնների փոփոխությունից կախված, ավելի փոքր պարբերականությամբ։

16. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերն են՝

1) **Կոշտ կենցաղային թափոն՝** աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված թափոն։

2) **Խոշոր եզրաչափի թափոն՝** 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում։

3) **Շինարարական աղբ.**

4) **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ,** մետաղական ջարդոն,

5) **Փաթեթավորման թափոն՝** կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն։

6) **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)՝** չշահագործվող սարքավորում, սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից։

7) **Կենսաբանական թափոն՝** կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ։

8) **Պարտեզային թափոն՝** այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն։

9) **Անվադողեր՝** մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր։

10) Վտանգավոր թափոն՝ (բացի էէՍ թափոնից) ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն:

17. Աղյուսակ 5-ում ներկայացված է թափոնների բաղադրությունը՝ տոկոսներով ըստ ընդհանուրի: Աղյուսակ 5-ի II բաշնի սյունակը լրացված չէ, քանի որ թափոնների բաղադրության մանրակրկիթ ուսումնասիրություն չի կատարվել:

Աղյուսակ 5

| I Թափոնի տեսակը        | %  | II Թափոնի տեսակը՝<br>մանրակրկիտ<br>բաղադրության<br>ուսումնասիրության<br>դեպքում | % |
|------------------------|----|---------------------------------------------------------------------------------|---|
| Օրգանական              | 50 | Խոհանոցային                                                                     |   |
|                        |    | Այգիներից,<br>պուրակներից և այլ<br>կանաչ տարածքներից                            |   |
| Թուղթ և<br>ստվարաթուղթ | 15 |                                                                                 |   |
| Պլաստիկ                | 15 | Պլաստիկ շշեր                                                                    |   |
|                        |    | Պոլիէթիլենային<br>փաթեթավորումներ                                               |   |
|                        |    | Պլաստիկ տարաներ                                                                 |   |
| Մետաղ                  | 2  |                                                                                 |   |
| Այլ թափոն              | 18 | Էլեկտրական                                                                      |   |
|                        |    | տեքստիլ                                                                         |   |
|                        |    | փայտ                                                                            |   |
|                        |    | վտանգավոր                                                                       |   |
|                        |    | այլ                                                                             |   |

## 5) Թափոնների գործածությունը

18. Համայնքում աղբահանությունն ու սանիտարական մաքրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված օպերատորի կողմից: Համայնքի տարածքում կանաչապատումը, բարեկարգումը և գերեզմանատների սպասարկումն իրականացվում է համայնքային ենթակայությամբ գործող՝ «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից:

19. Աղյուսակ 6-ում բերված են թափոնների գործածության ձևերը և դրանց նկարագրությունները: Համայնքում գործածվում է միայն 6-րդ աղյուսակի I տողով ներկայացված ձևը:

Աղյուսակ 6

|                           |                |
|---------------------------|----------------|
| Թափոնների գործածության ձև | Նկարագրություն |
|---------------------------|----------------|

|     |                                                |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|-----|------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| I   | Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում      | Թափոնների խառը հավաքում և հեռացում օպերատորի կողմից դեպի աղբավայր կամ տեսակավորման կենտրոն: Ինչպես նաև թափոն առաջացնողի կողմից աղբի ինքնափոխադրում դեպի տեսակավորման կենտրոն                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
| II  | Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում   | Սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորված հավաքում կամ թափոն առաջացնողի կողմից տեղափոխում դեպի տեսակավորման կենտրոն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| III | Թափոնների վերաօգտագործում և վերակիրառում       | Ապրանքի բազմակի օգտագործման ի սկզբանե տրված նպատակով (օրինակ՝ ապակե շիշ, ստվարաթղթե տուփ և այլն), ինչպես նաև՝ երբ այլ անձանց համար անցանկալի, ոչ պիտանի նյութերը դրվում են տնտեսական շրջանառության մեջ այլ նպատակներով                                                                                                                                                                                                                                                                                          |
| IV  | Թափոնների վերամշակում և օգտահանում             | Երբ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում փոխվում են թափոնների ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները և դրանք օգտագործվում են որպես երկրորդային նյութ՝ <ul style="list-style-type: none"> <li>• վերամշակման միջոցով կենսազազի, բրիկետների, պելետի, բիոդիզելի, այլ վառելիքների ստացում,</li> <li>• սննդային թափոնների աէրոբ մշակման (կոմպոստացում) միջոցով պարարտանյութի ստացում կամ չեզոքացում,</li> <li>• ջերմային մշակման (կիզում) միջոցով ջերմային կամ էլեկտրական էներգիայի ստացում</li> </ul> |
| V   | Վտանգավոր թափոնների չեզոքացում (վնասազերծում)  | Թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում՝ մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |
| VI  | Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում | Տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
| VII | Տեղադրում սանիտարական աղբավայրում              | Տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |

20. Աղյուսակ 7-ում ներկայացված է ամփոփ տեղեկատվություն՝ Համայնքում ըստ թափոնների քանակի, տեսակների և դրանց գործածության ձևերի

Աղյուսակ 7

[illegible]

21. Աղյուսակ 8-ում ներկայացված է Համայնքի տարածում աղբի հավաքման հիմնական մեթոդները:

Աղյուսակ 8

| Թափոնների հավաքման մեթոդ              | Ծառայությունից օգտվող բնակչություն (%) | Տեսակավորված հավաքում (տոննա) | Տեսակավորված հավաքում (%) | Չտեսակավորված հավաքում (տոննա) | Չտեսակավորված հավաքում (%) | Նշումներ |
|---------------------------------------|----------------------------------------|-------------------------------|---------------------------|--------------------------------|----------------------------|----------|
| Աղբամաններից                          | 70                                     | 0                             |                           | 3242                           | 100                        |          |
| Աղբախցերից                            | 0                                      | 0                             |                           | 0                              | 0                          |          |
| Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից | 25                                     | 0                             |                           | 1158                           | 100                        |          |
| Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից | 0                                      | 0                             |                           | 0                              | 0                          |          |
| Ինքնափոխադրում                        | 5                                      | 0                             |                           | 232                            | 100                        |          |

22. Աղյուսակ 9-ում ներկայացված է 2024 թվականին Համայնքի տարածքում աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող օպերատորի վերաբերյալ համապատասխան տվյալներ:

Աղյուսակ 9

| Օպերատորի անվանում | Սպասարկվող համայնքներ / բնակավայրեր | Սպասարկվող տարածքի բնակչության թիվ | Օպերատորի աղբատար մեքենաների թիվը | Օպերատորի աղբատար մեքենաների տեսակը, տարողությունը | Հավաքվող թափոնների տեսակները | Օպերատորի աշխատանքի գնահատական (1-ից 5) | Նշումներ |
|--------------------|-------------------------------------|------------------------------------|-----------------------------------|----------------------------------------------------|------------------------------|-----------------------------------------|----------|
| «Մաքրություն» ՍՊԸ  | Եղեգնաձոր համայնք                   | 20928                              | 3                                 | Փակ թափքով աղբատար մեքենա, 11 տոննա տարողությամբ   | Խառը                         | 4.5                                     |          |

23. Աղյուսակ 10-ում ներկայացված է Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության սխեման.

Աղյուսակ 10

| Թափոնի տեսակ | Հեռավորությունը մինչև աղբավայր, կմ | Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան, կմ | Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն, կմ | Հեռավորություն մինչև այլ գործածության կայանք /վերամշակման գործարան և այլն/ կմ | Նշում ինքնափոխադրման մասին |
|--------------|------------------------------------|--------------------------------------------|-----------------------------------------------|-------------------------------------------------------------------------------|----------------------------|
|              |                                    |                                            |                                               |                                                                               |                            |

|                                                                       |                                                                                                         |   |   |   |                      |
|-----------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------|---|---|---|----------------------|
| Կոշտ<br>կենցաղային<br>թափոն                                           | Եղեգնաձոր ք. 1.5 կմ,<br>Գլաձոր գ. 4.5 կմ,<br>Գետափ գ. 4.5 կմ,<br>Մալիշկա գ. 6 կմ,<br>Վերնաշեն գ. 6.5 կմ | - | - | - |                      |
| Խոշոր<br>եզրաչափերի<br>թափոն                                          | Եղեգնաձոր ք. 1.5 կմ,<br>Գլաձոր գ. 4.5 կմ,<br>Գետափ գ. 4.5 կմ,<br>Մալիշկա գ. 6 կմ,<br>Վերնաշեն գ. 6.5 կմ | - | - | - |                      |
| Շինարարական<br>աղբ                                                    | Եղեգնաձոր ք. 1.5 կմ,<br>Գլաձոր գ. 4.5 կմ,<br>Գետափ գ. 4.5 կմ,<br>Մալիշկա գ. 6 կմ,<br>Վերնաշեն գ. 6.5 կմ | - | - | - |                      |
| Շահագործումից<br>դուրս եկած<br>ավտոմեքենանե<br>ր, մետաղական<br>ջարդոն |                                                                                                         |   |   |   | Տվայլներ առկա<br>չեն |
| Անվադողեր                                                             |                                                                                                         |   |   |   | Տվայլներ առկա<br>չեն |
| Փաթեթավորում<br>և փաթեթվածք                                           |                                                                                                         |   |   |   | Տվայլներ առկա<br>չեն |
| Էլեկտրական և<br>էլեկտրոնային<br>թափոն                                 |                                                                                                         |   |   |   | Տվայլներ առկա<br>չեն |

24. Աղյուսակ 11-ում ներառվում են տվյալներ վերաօգտագործման, վերաօգտագործման նախապատրաստման կամ վերակիրառման համար:

Աղյուսակ 11

| Արտադրողի<br>անվանում | Արտադրանքի<br>տեսակ | Վերադարձվող<br>բաղադրիչ | Վերադարձի/<br>հավաքման<br>մեխանիզմ | Սպառողի<br>համար<br>վերադարձի<br>հարմարություն | Նշումներ |
|-----------------------|---------------------|-------------------------|------------------------------------|------------------------------------------------|----------|
|                       |                     |                         |                                    |                                                |          |
|                       |                     |                         |                                    |                                                |          |
|                       |                     |                         |                                    |                                                |          |

*\* Քանի որ այս պահի դրությամբ Համայնքում հավաքված աղբի վերաօգտագործում կամ վերակիրառում չի կատարվում, ուստի աղյուսակում տվյալները բացակայում են:*

25. Աղյուսակ 12-ում ներկայացված է Համայնքում վերանորոգման կարողությունների վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 12

| Արտադրանքի տեսակ                              | Վերանորոգման կետերի թիվ | Նշումներ |
|-----------------------------------------------|-------------------------|----------|
| Սառնարան                                      | 0                       |          |
| Լվացքի մեքենա                                 | 0                       |          |
| Այլ կենցաղային տեխնիկա                        | 0                       |          |
| Հագուստ կոշիկ                                 | 5                       |          |
| Կահույք                                       | 4                       |          |
| Ավտոպահեստամասեր                              | 7                       |          |
| Շինարարություն / պատուհան, դուռ, տանիք և այլն | 5                       |          |

26. Աղյուսակ 13-ում նկարագրվում է թափոնների ոչ ֆորմալ տեսակավորման և օգտահանման գործունեությունը:

Աղյուսակ 13

| Տեսակավորվող թափոնի տեսակ | Հավաքվում է ընդունման կետում այո/ոչ | Հավաքվում է աղբամաններից | Հավաքվում է սպասարկման օբյեկտներից | Հավաքվում է աղբավայրերից |
|---------------------------|-------------------------------------|--------------------------|------------------------------------|--------------------------|
| Ապակի                     | Ոչ                                  |                          |                                    |                          |
| Պլաստիկ                   | Ոչ                                  |                          |                                    |                          |
| Մետաղ                     | Ոչ                                  |                          |                                    |                          |
| Թուղթ                     | Ոչ                                  |                          |                                    |                          |
| Ավտոմեքենայի մարտկոց      | Ոչ                                  |                          |                                    |                          |
| Այլ թափոններ              | Ոչ                                  |                          |                                    |                          |

*\* Տվյալների բացակայության պատճառով՝ աղյուսակը լրացված չէ*

27. Աղյուսակ 14-ում ներկայացվում են թափոնների գործածության կայանքների վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 14

| Թափոնների գործածության կայանքներ | Առկայություն | Հզորություն, հազ տ/տարի | Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ | Նշումներ |
|----------------------------------|--------------|-------------------------|-----------------------------------------|----------|
| Տեսակավորման կենտրոն             | Առկա չէ      |                         |                                         |          |
| Ապակու վերամշակման կայանք        | Առկա չէ      |                         |                                         |          |
| Մետաղի վերամշակման կայանք        | Առկա չէ      |                         |                                         |          |
| Պլաստիկի վերամշակման կայանք      | Առկա չէ      |                         |                                         |          |
| Թղթի վերամշակման կայանք          | Առկա չէ      |                         |                                         |          |
| Կոմպոստացման կայանք              | Առկա չէ      |                         |                                         |          |
| Կենսազազի արտադրման կայանք       | Առկա չէ      |                         |                                         |          |
| Աղբակիզման կայանք                | Առկա չէ      |                         |                                         |          |
| Վնասազերծման/վերացման կայանք     | Առկա չէ      |                         |                                         |          |
| Փոխաբեռնման կայան                | Առկա չէ      |                         |                                         |          |

|          |         |  |  |  |
|----------|---------|--|--|--|
| Աղբավայր | Առկա չէ |  |  |  |
| Այլ      | Առկա չէ |  |  |  |

28. Աղյուսակ 15-ում նկարագրված է համայնքի տարածքում առկա աղբավայրի վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 15

| Աղբավայր                           | Շահագործող համայնք/բնակավայրեր              | Աղբավայրի մակերես, հա | Տեղադրվող աղբի տեսակ | Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/ | Սեփականության/օգտագործման իրավունք | Շահագործողի անվանում | Աղբի տեղադրման վճարը /ՀՀ դրամ/ տոննա | Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհի ատվածի վիճակը |
|------------------------------------|---------------------------------------------|-----------------------|----------------------|-------------------------------------------------|------------------------------------|----------------------|--------------------------------------|----------------------------------------------------|
| քաղաք Եղեգնաձոր «Շորդարա» հանդամաս | Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլածոր, Վերնաշեն | 1.74                  | Կենցաղային աղբ       | Ավագանու որոշում 16.08.2013թ. թիվ 37            | Համայնք                            | Եղեգնաձոր համայնք    | 10000                                | Լավ                                                |

29. Պլանի արդյունավետ իրականացման համար՝ աղյուսակ 16-ում սահմանված են Պլանում այս կամ այն կերպ ներգրավված անձանց (շահակիրներ) պատասխանատվության փաստացի բաշխումը:

Աղյուսակ 16

| Պատասխանատուներ               | Իրազեկության բարձրացում (%) | Խառը հավաքում (%) | Տեսակավորված հավաքում (%) | Տեղափոխում (%) | Տեսակավորում /գործարանային/ (%) | Վերաօգտագործում /կրկնօգտագործում/ (%) | Վերամշակում և/կամ օգտահանում (%) | Վտանգավոր թափոնների վնասագերծում /վերացում (%) | Տեղադրում աղբավայրում (%) |
